Արձանագրություն N 3

ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/2 ծածկագրով էլ.աճուրդի ընթացակարգով Ծաղկաձոր համայնքի կարիքների համար ,,ռեգուլյար,, և ,,պրեմիում,, տեսակի բենզինի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք.Ծաղկաձոր 03 հոկտեմբերի 2018թ.

ժամը 10:00

Մասնակցում էին հանձնաժողովի

նախագահ՝ Գ.Հայրապետյան

անդամ՝ Է.Հովհաննիսյան

Լ.Սարգսյան

Լ.Խաչատրյան

քարտուղար՝ Ա.Ավետիսյան

Հանձնաժողովի անդամ Վ.Հայրապետյանը գտնվում է հերթական արձակուրդում և նիստին չի մասնակցում:

1. Էլ.աճուրդի ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Գ.Հայրապետյան)

Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ժամկետում <<Սիփիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊ ընկերությունը ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

1.2 ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված պարտավորությունների վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը՝

Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել <<Սիփիէս Օիլ Քորփորեյշն>> ՍՊ ընկերությանը:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվելու է սույն հայտարարությամբ սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հաստատման մասին

(Գ.Հայրապետյան)

Հաստատել **ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-18/2** ծածկագրով էլ. աճուրդի ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գ.Հայրապետյան

անդամներ՝ _____ Լ.Խաչատրյան

_____ Է.Հովհաննիսյան

_____ Լ.Սարգսյան

քարտուղար՝ _____ Ա.Ավետիսյան